Հավելված N 2
2024 թվականի փետրվարի 07-ին կնքված
«ԴՏՊ-1141-11018/24» ՍՕՍԵ պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 4**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Միջոցառման անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍԵ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01.01.2024-31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2024-30.12.2024 |
| **Ներկայացման օր** | 13.12.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Աննա Իսրայելյան, ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1. Ապահովել երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, այդ թվում՝ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայությունների տրամադրում, մասնագիտական կողմնորոշում, արտթերապիա (ծառայությունը նպաստում է երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, վեր է հանում ուժեղ և թույլ կողմերը և այլն), անձի զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում (քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և այլ խմբակների միջոցով)
2. Ապահովել սոցիալական աշխատանք ընտանիքի հետ՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով
3. Ապահովել սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ

4. Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ
5. Տրամադրել ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթ
6. Կազմակերպել երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացներ
7. Տրամադրել հնարավորություն շահառուներին՝ ծառայության որակն անանուն գնահատելու և առաջարկություններ ստանալու համար՝ արդյունքները ներառելով եռամսյակային հաշվետվություններում:
8. Տրամադրել առնվազն մեկ շահառուի անձնական օգնականի ծառայություն՝ ելնելով տվյալ երեխայի կարիքներից

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**1.** Հաշվետու ժամանակահատվածում՝ 2024 թ. չորրորդ եռամսյակում «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծառայություն է մատուցվել 140 երեխայի 78 ընտանիքից:

Այս ընտանիքներից 8-ը (18 երեխա) Արցախից բռնի տեղահանված ընտանիքներ են: Եռամսյակի ընթացքում 5 ընտանիքի 9 երեխա դուրս է եկել ծրագրից՝ առողջական խնդիրների, մասնակցի բնակության վայրից ցերեկային կենտրոնի հեռու գտնվելու, պետական մանկապարտեզ տեղափոխվելու, ինչպես նաև անհատական վերականգնողական պլանում խնդիրների լուծման հետևանքով: Այս ժամանակահատվածում ծրագիր է ընդգրկվել 1 երեխա:

Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հմտությունների զարգացման նպատակով իրականացվել են անհատական և խմբային հոգեբանական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2 երեխայի առաջնային հոգեբանական գնահատում, վերհանված կարիքների հիման վրա կազմվել են անհատական հոգեբանական աջակցության ծրագրեր:

Իրականացվել է անհատական հոգեբանական թերապիա 28 երեխայի հետ՝ հուզական, վարքային, հաղորդակցման, իմացական դժվարությունները հաղթահարելու, մանր և ընդհանուր մոտորիկաները զարգացնելու նպատակով: Հանդիպումները նպաստել են անձի զարգացմանը, ինչպես նաև օգնել են վերհանել ուժեղ և թույլ կողմերը, գտնել ներքին ռեսուրսներ դժվարությունները հաղթահարելու համար, կարգավորել հուզական դրսևորումները, ամրապնդել դժվար իրավիճակների հաղթահարման մեխանիզմները:

Իրականացված աշխատանքների շնորհիվ 7 երեխայի մոտ կարգավորվել են վարքային դժվարությունները, լուծվել են ուսումնական հաստատություններում խնդիրների առաջացման պատճառները, բարելավվել են միջանձնային հարաբերությունները հասակակիցների հետ:

8 երեխա սկսել է գիտակցել իր դժվարությունները, կարողանում է տարբերել լավ և վատ արարքները: Տղաների մոտ նվազել է վերբալ ագրեսիան, նրանք ավելի կառուցողական հարաբերություններ են ստեղծում հասակակիցների հետ:

Անհատական թերապիաները որոշ չափով նպաստել են երեխաների կոգնիտիվ գործընթացների, հաղորդակցման հմտությունների, մանր և ընդհանուր մոտորիկաների զարգացմանը, հույզերի ճանաչմանը և կառավարմանը: Երեխաները կարողանում են խոսել և նկարագրել իրենց դժվարությունները, ապրած տրամադրմանը՝ արտ թերապևտիկ և պրոյեկտիվ մեթոդիկաների միջոցով: Աշխատանքները շարունակական են:

19 երեխայի հետ իրականացվել են խմբային աշխատանքներ՝ ուղղված դրական մտքերի ձևավորմանը, ինքնաճանաչման և ինքնակարգավորման գործընթացների կառավարմանը, հույզերի ճանաչմանը: Խմբային աշխատանքների ընթացքում խոսվել է նաև սթրեսակայունության, սթրեսի բացասական և դրական կողմերի մասին: 1 երեխա ուղղորդվել է հոգեկան առողջության կենտրոն,

ստանում է բուժում, 2 երեխա ուղղորդվել է մանկական հոգեբույժի մոտ գնահատման: Եռամսյակի ընթացքում հետազոտվել և լոգոպեդական անհատական պարապմունքների մեջ են ընդգրկվել 2 երեխա:

Եռամսյակի ընթացքում պարապմունքներ են տարվել 13 երեխաների հետ, որոնցից 4-ի հետ աշխատանքները գտնվում են հնչյունի ամրապնդման ու տարբերակման փուլում և ավարտվում են, 9-ի հետ աշխատանքները շարունակվում են: Երեխաներից 3-ի հետ տարվում են աշխատանքներ հնչյունի դրման ուղղությամբ: Խոսքի զարգացման հապաղում ունեցող 5 երեխաների մոտ ևս նկատվում է առաջընթաց, և բոլոր աշխատանքները, որոնք ուղղված են բառապաշարի հարստացմանն ու կապակցված խոսքի զարգացմանը, շարունակվում են: 1 երեխայի հետ էլ շարունակվում են կակազության հաղթահարմանն ուղղված աշխատանքները: Բոլոր աշխատանքներն ընթանում են պարբերաբար և կրում են շարունակական բնույթ:

Եռամսյակի ընթացքում հատուկ մանկավարժի աջակցություն են ստացել 7 տղա երեխա: Աշխատանքները տարվել են անհատական հանդիպումների ձևով: Հատուկ մանկավարժի աշխատանքն ուղղված է եղել ուսումնական դժվարությունների հաղթահարմանը: Առկա է եղել մի շարք ուսումնական դժվարություններ՝ պայմանավորված երեխաների զարգացման առանձնահատկություններով, ցուցաբերվել է անհատական մոտեցում հաշվի առնելով երեխաների առանձնահատկությունները: Աշխատանքի հիմնական նպատակը եղել է ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացումը, կարդալու և գրելու կարողությունների զարգացումը, իմացական ոլորտի զարգացումը և տառուսուցումը: Աշխատանքներն ընթացել են դրական տեղաշարժով, առաջացել է հետաքրքրություն ուսումնական գործընթացի նկատմամբ, որոշ երեխաներ արդեն կարողանում են գրել և կարդալ մի քանի տառ, անհրաժեշտ է հետագայում շարունակել աշխատանքները ստացված արդյունքը պահպանելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում 96 երեխա մասնակցել է «Կյանքի հմտություններ» խմբակին, որի շրջանակներում երեխաները ծանոթացել և քննարկել են այնպիսի թեմաներ, որոնք մշակվել են հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկություններն ու հմտությունները: Խմբակի իրականացման ժամանակ անդրադարձել են հետևյալ թեմաներին. «Մաքուր կենցաղ», «Առողջ միջավայր», «Անհաշտության պատճառները», «Ինչպե՞ս վարվել», «Հաղթանակ, թե՞ պարտություն», «Վարքականոններ», «Վտանգները շրջապատում», «Հրդեհ», «Առաջին օգնություն», «Անձնական ապահովություն», «Անվտանգությունը տրանսպորտում», «Անվտանգությունը բնության գրկում»: Երեխաները սովորում են հստակ ձևակերպել իրենց խոսքն ու ներկայացնել, ձեռք են բերում նոր ընկերներ, համագործակցում են և արտահայտում սեփական մտքերը: Խմբակի շրջանակներում երեխայի մոտ զարգանում են հաղորդակցման, դիտարկման, կողմնորոշման, վերլուծական և քննադատական մտածողության, միմյանց լսելու, գնահատելու, արժևորելու, համադրելու, եզրահանգումներ կատարելու, տեղեկությունների տնօրինման, ինչպես նաև որոշումներ կայացնելու հմտություններն ու կարողությունները:

Դասընթացի ժամանակ կիրառվել են տարբեր ինտերակտիվ մեթոդներ, վարժություններ, որոնց շնորհիվ երեխաներն անկաշկանդ և ակտիվ մասնակցություն են ունենում պարապմունքներին:

96 երեխա մասնակցել է «Հմուտ ձեռքեր» խմբակին, որը ներառում է նկարչություն, ապլիկացիա, արտ-թերապիա, կավագործություն, կոլաժների պատրաստում, այլընտրանքային նկարչություն: Խմբակի նպատակն է երեխաների մոտ սեփական երևակայության և մտքի թռիչքի ձևավորումը, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացումը, անձի ինքնարտահայտման ընդլայնումը, մանր մոտորիկայի զարգացումը, հոգեկան կայունության ամրապնդումը, արվեստի հանդեպ սեր և գեղագիտական ճաշակ ձևավորելը:

Հաշվետու ժամանակահատվածում երեխաների հետ իրականացվել են կավագործության (թեմա՝ դեկորատիվ իրերի պատրաստում և ներկում), այլընտանքային նկարչության (թեմա՝ աշնանային ծառ), ապլիկացիայի (թեմա՝ աշնան բնապատկեր, ոզնի), կոլաժի (ազատ թեմա), նկարչության (թեմա՝ սկյուռ, ոզնի, բնապատկեր) դասընթացներ, որոնց ժամանակ հնարավորություն են ունեցել ծանոթանալ համապատասխան նյութատեխնիկական բազային և դրանք կիրառելու հմտություններին: Երեխաները կարողացել են դրսևորել իրենց սեփական երևակայությունը, գեղագիտական ճաշակը, մտքի իրագործման համար օգտվել համապատասխան նյութերից:

89 երեխա մասնակցել է «Մեդիագրագիտություն» խմբակին, որի ժամանակ անդրադարձել ենք այնպիսի թեմաների, ինչպիսիք են «Սոցիալական մեդիան և ինքնությունը», «Հեռուստատեսային պատկերը և իրականությունը», «Խոսքի ազատությունը և էթիկան», «Կիբերհանցագործություններ»:

Թեմաների շնորհիվ երեխաները սովորել են սոցիալական մեդիայում ճիշտ կառուցել իրենց «ես»-ը, որը պետք է իրենց իրական կերպարի և ցանկալի ճիշտ խառնուրդ օտարների համար: Սովորել են քննադատական մտածողությամբ վերլուծել հեռուստատեսությամբ դիտած նյութերը, ԶԼՄ-ների ներկայացրած տեղեկությունները, ծանոթացել են կիրառվող հնարքներին (մոնտաժ և այլն), կարողացել են պատկերացում կազմել խոսքի ազատության և սահմանափակումների մասին: Մեդիա հարթակում անվտանգ վարք դրսևորելու համար ծանոթացել են նաև կիբերհանցագործությունների ձևերի, գործունեության ոլորտների և դրանցից զերծ մնալու տարբերակների հետ, քննարկել ենք տարբեր դեպքեր՝ հնարավոր բխող հետևանքներով և դրանցից խուսափելու տարբերակներով:

Դասընթացների ժամանակ կրկին կիրառվել են տարբեր ինտերակտիվ մեթոդներ, ցուցադրվել են տեսանյութեր, գովազդներ, կազմակերպվել են հոդվածների քննարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում երեխաների հետ կատարել ենք տարեսկզբից սկսած անցած նյութերի կրկնություն, որի միջոցով թարմացրել ենք գիտելիքները և ամրապնդել ենք առավել կարևոր թեմաները՝ ընդգծելով մեդիագրագետ լինելու կարևորությունը:

Եռամսյակի ընթացքում 95 երեխա մասնակցել է «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացին: Նախորդ եռամսյա ժամանակահատվածում աշխատանքները բաժանել էինք ըստ բնագավառների և ուսումնասիրել կրթությունը: Իսկ այս եռամսյակում ուսումնասիրել ենք «Առողջապահություն», «Մշակույթ ու արվեստ» բնագավառները. ինչ գիտելիքներ և հմտություններ են պահանջվում այս ոլորտների մասնագետներ դառնալու համար, ինչ մասնագիտացումներ կան այս ուղղություններով, որտեղ կարելի է աշխատել այս մասնագիտություններով: Վերջում ամփոփել ենք ստացած գիտելիքները:

Արդյունքում երեխաները ստացել են համակարգված տեղեկություններ առողջապահության և արվեստի ոլորտների մասին, ամրապնդել ստացած գիտելիքները:

Հոկտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում 12 երեխա օգտվել է նախադպրոցական կրթությունից, որոնք իրականացվել են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ 4-ժամյա գրաֆիկով՝ ըստ նախապես կազմած ծրագրի: Ծրագրի մեջ ներառված են ֆիզկուլտուրայի, խոսքի զարգացման, գեղարվեստական գրականության, շրջակա միջավայրի, նկարչության, ծեփակերտման, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների, տարրական մաթեմատիկայի, երաժշտության պարապմունքներ:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների մեջ ներառված են ցատկեր, շարումներ, պարային և ռիթմիկ վարժություններ, հավասարակշռության պահպանման վարժություններ, շարժախաղեր, նետումներ, մարմնամարզություն: Պարապմունքների արդյունքում երեխաները կարողանում են քայլել շարասյունով, կից քայլերով, վազել, ցատկել զույգ ոտքերով, նետել գնդակը, շարվել շարասյունով:

Խոսքի զարգացման, գեղարվեստական գրականության, շրջակա միջավայրի և էկոլոգիայի պարապմունքների շնորհիվ երեխաները կարողանում են լսածը վերապատմել, նկարը պատմել, բանաստեղծությունները արտահայտիչ կերպով արտասանել, ծանոթանում են իրենց շրջապատող աշխարհին, կատարվող փոփոխություններին, բնության երևույթներին, ձևավորվում են ճանաչողական կարողություններ, որոնց արդյունքում հարստանում է երեխաների բառապաշարը, ձևավորվում է կապակցված խոսքը, մտքերը ճիշտ կազմելու և արտահայտվելու կարողությունը:

Նկարչության, ծեփակերտման, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների պարապմունքների շնորհիվ զարգացել են երեխաների մանր մոտորիկան, ստեղծագործական ունակությունները, գեղագիտական ճաշակը, երևակայությունը:

Տարրական մաթեմատիկայի պարապմունքների շնորհիվ երեխաները սովորել են կողմնորոշվել տարածության մեջ, ամրապնդել են մաթեմատիկական հասկացությունները, սովորել են երկրաչափական պատկերները ճանաչել և խմբավորել ըստ հատկանիշների:

Երաժշտության պարապմունքների ժամանակ երեխաները սովորել են տարբեր թեմաներով երգեր (աշնան, ձմռան, ամանորյա և այլն), որոնց արդյունքում երեխաները սովորել են երգել առանց հետ ու առաջ ընկնելու, ունկնդրել երաժշտական ստեղծագործությունները, ճանաչել ծանոթ երգերը, կատարել պարային շարժումները:

Հաշվի առնելով երեխաների կարիքները, ինչպես նաև նախասիրությունները 23 երեխա ուղղորդվել է արտակենտրոն խմբակներ. քանդակի՝ 1 երեխա, դաշնամուրի՝ 3, վոկալի՝ 1 երեխա, նկարչության՝

6, պարի՝ 4, դհոլի՝ 2, կարատեի՝ 2, պարային ակրոբատիկա՝ 1 երեխա, արտթերապիա (նկարչություն և կիրառական դիզայն)՝ 1 երեխա, զարգացման խմբակներ՝ 1 երեխա, ջութակ՝ 1 երեխա:

5 երեխա հաճախել է կենտրոնում գործող գորգագործության խմբակ: Գորգագործության խմբակը դրական ազդեցություն ունի երեխաների մանր մոտորիկայի, երևակայության զարգացման վրա:

Խմբակի շնորհիվ երեխաները ամրապնդել են գորգի հիմքի գցման տեխնիկան, տիրապետել են գորգի ամրակարման գործընթացին, ուսումնասիրել են զարդանախշերը: Ծանոթացել և ուսումնասիրել են պատմական Հայաստանի տարբեր նահանգներին բնորոշ զարդանախշերը, դրանց տիպիկ գույներն ու առանձնահատկությունները: Այդ ամենին շարունակել են գորգի քարտեզագրման աշխատանքները, որոնց նպատակն է հյուսվելիք գորգի սխեմայի ստեղծումը: Քարտեզագրման դասընթացներին հաջորդել է գորգի հյուսման գործընթացը, որն արդեն ունի շարունակական բնույթ:

1 ծնողի և 16 երեխայի համար իրականացվել է ճանաչողական այց Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարան: Այցի ընթացքում երեխաները ծանոթացել են նկարչուհի, ազգագրագետ և մեծ հայուհի Լ. Ագուլեցու կենսագրությանը և գործունեությանը, ով հեղինակել է տարազ կրելու մշակույթը, գծել և կարել շատ նոր տարազներ: Ավելի քան 40 տարվա որոնողական աշխատանքներ կատարելով, նա կարողացել է հավաքել բազմաթիվ նմուշներ, որոնք ունեն մեծ պատմական արժեք: Դրամների հավաքածո, խեցեղեն, պերճանքի առարկաներ, աշխատանքային գործիքներ, սրբապատկերներ, հնատիպ գրքեր, հիարկե տարազներ և ազգային հագուստներ, հայկական նախշերով գորգեր: Հայտնի է նրա մեծ տիկնիկների հավաքածուն՝ դիցական, ծիսական: Այցի ժամանակ երեխաները հնարավորություն ունեցան ծանոթանալու այս ամենի հետ:

24 երեխա 3 ծնող կայցելի տիկնիկային թատրոն՝ մասնակցելու ամանորյա միջոցառմանը և հնարավորություն կունենա դիտելու ներկայացում:

**2.** ԿԴԻՀ երեխաների ընտանիքում ապրելու, զարգանալու, կրթություն ստանալու և հասակակիցների շրջանում լիարժեք ներառվելու, երեխաների իրավունքների՝ այդ թվում նաև ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով, համայնքի շահագրգիռ կողմերի հետ, հիմնվելով ընտանիքի կարիքի գնահատման, ինչպես նաև երեխաների անհատական զարգացման ծրագրերի վրա, իրականացվել է սոցիալական աշխատանք:

Շարունակվում են սոցիալ-հոգեբանական աշխատանքները բռնի տեղահանված 8 ընտանիքի հետ՝ առկա դժվարությունները հաղթահարելու նպատակով:

6 խնամք իրականացնող ուղղորդվել է ծրագրի զբաղունակության մասնագետի մոտ: Նրանց հետ տարվել է կարիերայի ուղղորդման, կայուն եկամուտի ձևավորման, կայուն զբաղվածություն ունենալու, նախասիրությունների և կարողությունների գնահատման հարցով խորհրդատվություն: Արդյունքում 5 ծնող ստացել է աշխատանքային գործիքներ (վարսավիրական, մատնահարդարման, հոնքերի փոշեդրման նյութեր), 2 խնամք իրականացնող ուղղորդվել է մասնագիտական դասընթացների: 1 ծնող, ով հաճախում էր վարսավիրական դասընթացների, հաջողությամբ ավարտել է և ստացել է համապատասխան աշխատանքային գործիքներ, ձեռք է բերվել պայմանավորվածություն աշխատանքի վերաբերյալ: Մեկ ընտանիքում, որտեղ խնամք իրականացնողներից մեկն ունի հոգեկան առողջության խնդիր տրամադրվել է խորհրդատվություն հոգեկան առողջության կենտրոն ուղղորդման վերաբերյալ: Ապահովված է կապը համայնքի «Երեխաների և սոցիալական պաշտպանության» բաժնի հետ՝ հարկադիր բուժման ուղղորդմանն աջակցելու նպատակով: Աուտիստիկ սպեկտրի ախտորոշում ունեցող երեխայի մոտ արձանագրվել է առաջընթաց. երեխան ուղղորդվել է վերագնահատման մանկական հոգեբույժի մոտ, արդյունքում աուտիստիկ սպեկտրի խանգարում ախտորոշումը հերքվել և գնահատվել է որպես հոգեխոսքային զարգացման հապաղում: Երեխայի վարքը կանոնակարգվել է, հաղորդակցման և մտածողության մակարդակը՝ բարձրացել: Մայրը (խնամատար ծնող) երեխայի խնամքի իրականացման հետ կապված հարցերում դարձել է ավելի վստահ, ունի համակարգային մոտեցումներ հետագայում ստեղծված իրավիճակները հաղթահարելու համար:

Սոցիալ-հոգեբանական աշխատանքներ են տարվել կրթությունից դուրս մնալու վտանգի առջև կանգնած և վարքային խնդիրներ ունեցող 4 երեխայի և 3 խնամք իրականացնողի հետ: Տրամադրվել է խորհրդատվություն կրթության դերի կարևորության վերաբերյալ, ծնողներն իրազեկվել են կրթությունից դուրս մնալու վտանգների, երեխայի բացակայությունների դեպքում դպրոցի և ոստիկանության կողմից իրականացվող ընթացակարգերի մասին: Իրականացվել են հանդիպումներ դպրոցների մասնագիտական թիմերի հետ: Երեխաների արտադպրոցական

զբաղվածությունն ու սոցիալականացումն ապահովելու նպատակով՝ վերջիններս ուղղորդվել են ցերեկային խնամքի կենտրոն: Ցերեկային կենտրոնում ստացած ծառայությունների շնորհիվ երեխաները հաղթահարել են ուսումնական դժվարությունները, դարձել են ավելի ինքնուրույն և ձեռք են բերել ընկերներ:

**3.** Ինչպես նշել էինք 2024թ. երրորդ եռամսյակում՝ կենսաբանական ծնողի հետ վերամիավորման նպատակով աշխատանքներ էին տարվում մեկ կենսաբանական ծնողի հետ, ում հետ կապն էլ ընդհատվել էր, նա չէր պատասխանում հեռախոսազանգերին: Այս եռամսյակում շարունակվել են ծնողի գտնվելու վայրը պարզելու ուղղությամբ տարվող աշխատանքները, այց է կատարվել բնակավայր, որտեղ զրույց ենք ունեցել վերջինիս քաղաքացիական ամուսնու հետ, դեպքի հետ կապված մշտական կապ է պահվում «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ: Ծնողի գտնվելու վայրը շարունակում է մնալ անհայտ:

**4.** Ծրագրի սոցիալական աշխատողների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 60 խնամք իրականացնող և 13 երեխա ստացել է խորհրդատվություն առողջապահական, սոցիալական, իրավաբանական հարցերի շուրջ: 8 ծնող և 11 երեխա ստացել է խորհրդատվություն կրթության կարևորության վերաբերյալ, իրավաբանական խորհրդատվություն է ստացել 5 ծնող, 1 ծնող ուղղորդվել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, 1 ընտանիք ուղղորդվել է հանրային պաշտպանի գրասենյակ, 2 ծնող ստացել է իրավաբանական խորհրդատվություն վարկային խնդիրներ ունենալու և սնանկ ճանաչվելու հարցերի շուրջ, ինչպես նաև տան սեփականության փաստաթղթերի ձևակերպման վերաբերյալ: 27 երեխա մասնակցել է «Առողջ ապրելակերպի հիմնական սկզբունքները» թեմայով դասընթացին: Իրականացված սոցիալ-հոգեբանական աշխատանքների, ինչպես նաև բժշկական միջամտության արդյունքում բարելավվել է ծրագրի մասնակիցների առողջական և հոգեբանական վիճակը:

4 երեխա ստանում է վերականգնողական արտակենտրոն ծառայություններ՝ բուժական լող, որի արդյունքում բարելավվել է վերջիններիս առողջական վիճակը:

2 ծնող, 2 երեխա ուղղորդվել է տեղամասային պոլիկլինիկա առաջնային բուժզննում ստանալու նպատակով: 3 ծնող, 1 երեխա անցել է լաբորատոր հետազոտություններ:

14 ծնող մասնակցել է «Իրավական գրագիտություն» թեմայով դասընթացին, որի ընթացքում քննարկվել են «Ամուսնաընտանեկան հարաբերություններ», «Ժառանգական հարաբերություններ», «Պարտավորական հարաբերություններ» թեմաները:

**5.** Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին օրվա ընթացքում տրամադրվել է սննդի փաթեթ՝ շաբաթական միջինում 120-150 փաթեթ:

**6.** Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ «Երևան» մասնաճյուղի ցերեկային խնամքի կենտրոնում երեխաների և ծնողների հետ իրականացվել են երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացներ:

89 երեխա մասնակցել է «Ֆինանսական գրագիտություն» դասընթացին:

Այս եռամսյա ժամանակահատվածում ցերեկային խնամքի կենտրոնի երեխաները սովորել են, թե ինչպես պետք է հաշվել ապրանքի ինքնարժեքը, թիմային աշխատանքի միջոցով տարբերակել ուղղակի և անուղղակի ծախսերը: Խաղացել են նաև «Ֆինանսական լոտո» խաղը, ամփոփել են ստացած գիտելիքները:

Արդյունքում երեխաները կարողացել են հաշվել որոշ ապրանքների ինքնարժեքները, տարբերակել ուղղակի և անուղղակի ծախսերը, ամրապնդել ստացած գիտելիքները:

Երեխայի իրավունքների իրազեկվածության բարձրացման նպատակով «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ «Երևան» մասնաճյուղի «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

1. 17.09.2024-20.09.2024թ. իրականացվել են քննարկումներ «Երեխաների իրավունքների իրազեկում» թեմայի շուրջ, որի նպատակն է եղել երեխաներին ծանոթացնելը իրենց իրավունքների և պարտականությունների հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների իրավունքների վերաբերյալ

իրազեկվածությանը: Քննարկումներին մասնակցել է 7-14 տարեկան 30 երեխա: Քննարկումների ժամանակ ցուցադրվել է տեսաֆիլմ, իրականացվել է խմբային աշխատանք՝ պաստառի տեսքով:

2. Օգոստոս ամսվա ընթացքում (19.08.2024, 21.08.2024.23.08.20242.) 7-14 տ. ծրագրի մասնակիցների հետ իրականացվել է «Երեխաների իրավունքներ» թեմայով դասընթաց, որի ընթացքում երեխաները ծանոթացել են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով ևՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրենց իրավունքներին, քննարկվել են երեխաների իրավունքների խախտման դեպքեր, ներկայացվել են երեխաների իրավունքների իրացմանը խոչընդոտող մի շարք մարտահրավերներ:

Դասընթացի շնորհիվ երեխաները սովորեցին, որ օժտված են մարդկային միևնույն ընդհանուր իրավունքներով, ինչ մեծահասակները, ինչպես նաև հատուկ իրավունքներով, որոնցով ճանաչվում են նրանց հատուկ կարիքները: Դասընթացի վերջում երեխաներին տրամադրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հեղինակած «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի գիրքը, որտեղ երեխաների իրավունքները ներկայացված են երեխաներին մատչելի լեզվով:

3.13.11.24թ.-ին. Իրականացվել է դասընթաց 9-15 տարեկան 17 ծրագրի մասնակիցների համար: Դասընթացի ընթացքում ներկայացվել է ՄԱԿ-ի Կոնվենցիան, Երեխաների իրավունքները և տեսակները, երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենքը, առկա խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիները: Իրականացվել է խաղ-վարժանք, թեմատիկ տեսանյութի դիտում և քննարկում: Հարց ու պատասխանի միջոցով տեղի է ունեցել թեմայի ամփոփում, ընթացիկ վեր հանված հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ: Դասընթացի արդյունքում բարձրացել է երեխաների իրազեկվածության մակարդակը, ինչն արտահայտվում էր նրանց ակտիվ մասնակցությամբ և պատասխաններով:

4. 2024 թվականի նոյեմբերի 12-ին «Երեխայի իրավունքները» թեմայով դասընթաց է կազմակերպվել Երևան քաղաքի յոթ վարչական շրջանների ղեկավարի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինների և տարածքային միասնական սոցիալական ծառայությունների 16 մասնագետների հետ: Մասնակիցներին տրամադրվել է գիտելիքներ երեխայի իրավունքների վերաբերյալ, որոնք սահմանված են միջազգային և ներպետական իրավական ակտերով, այդ թվում՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և Ընդհանուր մեկնաբանություններով: Այնուհետև տրամադրված գիտելիքներն ամրապնդվել են գործնական վարժությունների միջոցով: Դասընթացի սկզբում ինտերակտիվ քննարկմամբ վեր են հանվել թեմայի շուրջ մասնակիցների գիտելիքները և մոտեցումները, իսկ իրավունքների վերաբերյալ վարժության կիրառումից հետո դիտարկվել է էական փոփոխություններ վերջինների մոտեցումներում:

14 ծնողի հետ իրականացվել է անհատական հոգեբանական թերապիա, կապված երեխաների տարիքային դժվարությունների, ծնողավարման, կենցաղավարման հմտությունների զարգացման, ծնող-երեխա փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ: Իրականացված աշխատանքների շնորհիվ բարձրացել է իրազեկվածության մակարդակը, բարելավվել են ծնող-երեխա փոխհարաբերությունները, փոխվել են դժվարություններին արձագանքելու մոտեցումները: Նվազել է նյարդային լարվածությունը, տագնապայնությունը, որոշ չափով շտկվել են անձնային խնդիրները: Անհատական հոգեբանական խորհրդատվությունները շարունակվում են:

«Ոչ բռնությանը» միջազգային օրվա կապակցությամբ «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում պլանավորում իրականացվել են մի շարք միջացառումներ: 4 ծնող և 3-10 տ. 18 երեխա մասնակցել է «Թարս թզուկը» ինտերակտիվ ներկայացման դիտմանը «Հեքիաթերեն» շրջիկ թատրոնի կողմից: Իրականացնել են «Երեխաների անվտանգության պաշտպանություն» թեմայով դասընթացներ 34 ծրագրի մասնակցի հետ:

Իրականացվել է «Ծնող-երեխա հարաբերությունների բարելավում» թեմայով ինքնօգնության խումբ՝ 3 հանդիպումով: Հիմնական քննարկման թեման վերաբերվում էր ճգնաժամային տարիքային դժվարություններին՝ հատկապես դեռահասությանը: Քննարկումները ընթացել են ծնողների ակտիվ մասնակցությամբ: Ինքնօգնության խմբի մասնակիցները ներկայացնում էին իրենց ունեցած փորձը երեխաների հետ հարաբերություններում: Կատարվել է անդրադարձ մանկության շրջանում իրենց իսկ ծնողների հետ ունեցած հարաբերություններին: Քննարկվել են մասնավոր դեպքեր, հուզող հարցեր: Ծնողները անդրադարձել են նաև իրենց կյանքի դժվար փուլերին: Ծնողներից մեկը կարծիք հայտնեց, որ երեխաների հետ ունեցած խնդիրները ծագում են ծնողի ոչ ճիշտ մոտեցման պատճառով: Խմբի մեջ ձևավորվել էր մտերմիկ, ջերմ մթնոլորտ: Վերջնական ամփոփումից հետո ծնողները տեղեկացան միմյանց աշխատանքի և մասնագիտության մասին,

պատրաստակամություն հայտնեցին միմյանց աջակցելու և օգնելու դժվարությունների ժամանակ: 4 ծնող մասնակցել է «Ուժեղ ծնողներ, ուժեղ երեխաներ» դասընթացին:

**7.** Ծրագրի մասնակիցներին հնարավորություն է տրվել ծառայության որակն անանուն գնահատելու և առաջարկություններ անելու: Գնահատումն իրականացվել է 78 ծրագրի մասնակցի կողմից, որից 98,7% (77 մասնակից) շատ գոհ է մատուցված ծառայություններից, 1,2% (1 մասնակից)՝ գոհ: Թերթիկներում ազատ շարադրանքի տեսքով մասնակիցները շնորհակալական խոսք են գրել ծառայություն մատուցողների հասցեին:

**8.** Անձնական օգնականի ծառայությունից օգտվել է 1 վարքային խնդիրներ ունեցող և 1 աուտիզմ ունեցող երեխա: Անձնական օգնականը կենտրոնում իրականացվող դասընթացների ժամանակ օգնել է վերջիններիս:

**2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

- Ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտում է ցերեկային կենտրոնից հեռու բնակվելու հանգամանքը (տրանսպորտային ծախսեր, ժամանակ), ինչպես նաև կրթական հաստատություններում գտնվելու ժամային գրաֆիկի հետ անհամատեղելիությունը ցերեկային կենտրոնի ժամատախտակի հետ:
- Նվազել է 3-6 տ. ցերեկային կենտրոն հաճախող երեխաների թիվը՝ երեխաները արդեն հաճախում են պետական մանկապարտեզներ ավելի երկար ժամանակով:
- Օրավարձով աշխատող ծնողների համար խնդիր է դառնում օրվա ընթացքում մասնակցությունը կենտրոնում իրենց համար կազմակերպված դասընթացներին:
- Վարքային խնդիրներ ունեցող երեխաների համատեղ մասնակցությունը խմբակներին դժվարացնում է մանկավարժների աշխատանքը, կարիք կա անհատական մոտեցման և այստեղ փորձում ենք կիրառել անձնական օգնականի գործառույթը:

**2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

«ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍԵ պայմանագրով իրականացվող ծրագիրն ավարտվում է 2024 թվականի դեկտեմբերի 31-ն:

**2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

ֆեն - 26 ընտանիքի

ՑԽԿ ճանապարհածախս - 54 երեխայի

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ

ազգային տնօրեն Ս. Սարգսյան